DEVELOPMENT PATHWAYS

# Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի գնահատում

## Կանանց տնտեսական հզորացման շահակիցների համաժողով

25 հոկտեմբերի 2022թ.

Հեղինակ՝ Բեթինա Ռամիրեզ Լոպեզ
Ներկայացնող՝ Հեղինե Մանասյան

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՇԵՄԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ» **զեկույցի բաժինները**

- ԵՐԿՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԿԵՆՍԱՓՈՒԼԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ
- ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ
- ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱԶԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
- ԱՇԽԱՏՈՒՆԱԿ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ԲԱԶԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ԾԱԾԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
- ՏԱՐԵՑՆԵՐԻ ԲԱԶԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
- ԱՆՑՈՒՄ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ
- ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հայերեն. https://georgia.unwomen.org/sites/default/files/2022-09/Social%20Protection%28arm%29.pdf
- Անգլերեն. https://georgia.unwomen.org/sites/default/files/2022-02/Social%20Protection%28eng%29.pdf

# Վերլուծության շրջանակ

| Մասնակցային նպաստներ | Ոչ մասնակցային սոցիալական աջակցության նպաստներ |
|---|---|
| • Պետական կենսաթոշակներ<br>○ *Տարիքային*<br>○ *Հաշմանդամության*<br>○ *Կերակրողին կորցնելու դեպքում*<br>• Ժամանակավոր անաշխատունակության նպաստներ<br>○ *Մայրության*<br>○ *Հիվանդության*<br>○ *Աշխատանքային խեղվածքի* | • Ծերության նպաստ<br>• Հաշմանդամության նպաստ<br>• Կերակրողին կորցնելու դեպքում նպաստ<br>• Երեխայի ծննդյան միանվագ նպաստ<br>• Մայրության միանվագ նպաստ չաշխատող մայրերի համար<br>• Անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացման նպաստներ (FLSEB)<br>○ *Ընտանեկան նպաստ (ԸՆ)*<br>○ *Սոցիալական նպաստ (ՍՆ)*<br>○ *Հրատապ օգնություն (ՀՕ)* |

# Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգը մարդու կենսացիկլի համատեքստում

# Առանցքային ռիսկերը կենսացիկլի ընթացքում




*Աղբյուր՝ Development Pathways*

# Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի նկարագիրը

Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի համընդգրկունությունը՝ կենսացիկլի ռիսկերի տեսանկյունից՝ ըստ ԱՄԿ թ.102 կոնվենցիայի




*Աղբյուր՝ Հեղինակ*

# Ֆիսկալ քաղաքականության ակնարկ




Աղբյուր՝ ArmStatBank

**2019թ.-ին սոցիալական պաշտպանության ծախսերը կազմել են կառավարության ընդհանուր ծախսերի 28%-ը**




**2019թ.-ին սոցիալական պաշտպանության ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 6.9%-ը**

Աղբյուր՝ Տարբեր վարչական տվյալներ

# Հիմնական առողջապահական ծառայությունների հասանելիությունը

# Փաստացի ընդգրկում. Ֆինանսական ընդգրկում

**2019թ.-ին առողջապահական ծախսերը կազմել են կառավարության ընդհանուր ծախսերի 7%-ը**

**2019թ.-ին առողջապահական ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 1.5%-ը**




2019թ. կամավոր մասնավոր առողջապահական ապահովագրությամբ ընդգրկված է եղել բնակչության **5%-ը**, իսկ ՀԾՓ-ով՝ **10,5%-ը**:

*Աղբյուր՝ ILCS 2018-ի վերլուծություն*

# Հայաստանում երեխաների բազային եկամտի ապահովումը

# Բարձր մանկական աղքատություն, բայց ցածր ծախսեր մանկական նպաստների վրա

Հարաբերականորեն աղքատ բնակչության բաժինը (տնային տնտեսությունների համահավասարեցված մեդիան սպառման 40%-ից և 60%-ից ցածր), ըստ տարիքային խմբերի (2019թ.)




*Աղբյուր՝ ILCS 2019-ի վերլուծություն*

Ընտանեկան (կանխիկ) նպաստի ծախսերը ԵԱՀԿ երկրներում (2019թ.) և Հայաստանում (2018թ.), տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ




*Աղբյուր՝ ԵԱՀԿ սոցիալական ծախսերի տվյալների տարբեր շտեմարաններ և Հայաստանի վարչական տվյալներ*

# Փաստացի ընդգրկում. հորիզոնական

| | Ընտանեկան նպաստ (ԸՆ) | Երեխայի ծննդյան միանվագ նպաստ | Հաշմանդամության (սոցիալական) նպաստ | Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ և նպաստ |
|---|---|---|---|---|
| **Հորիզոնական ընդգրկում (բնակչութ-յան բաժինը)** | Երեխա ունեցող 61,400 ընտանիքներ<br>Բոլոր երեխաների 23.8%-ը, բայց.<br>• Սպառման առաջին՝ նվազագույն դեցիլային խմբի միայն 49.2%-ը<br>• Սպառման երկրորդ դեցիլային խմբի միայն 30.8%-ը | Երեխաների անհայտ բաժինը | Բոլոր երեխաների 0.5%-ը, բայց.<br>• Հաշմանդամ ճանաչված երեխաների 60.4%-ը<br>• Հաշմանդամ չճանաչված երեխաների թիվը հայտնի չէ | • աշխատանքային նպաստ. բոլոր երեխաների 0.1%-ը<br>• Սոցիալական նպաստ. բոլոր երեխաների 0.2%-ը<br>• Մեկ կամ երկու ծնողին կորցրած, բայց կենսաթոշակի կամ նպաստի համար չդիմած երեխաների թիվը հայտնի չէ |




*Աղբյուր՝ ILCS 2019-ի վերլուծություն*




*Աղբյուր՝ ILCS 2019-ի վերլուծություն*

# Հայաստանում աշխատանքային տարիքի անձանց բազային եկամտի ապահովումը

# Աշխատանքային տարիքի անձանց սոցիալական պաշտպանությունն՝ ըստ զբաղվածության կարգավիճակի

| | Վարձու աշխատող | Ինքնազբաղված | Չաշխատող |
|---|---|---|---|
| Մայրության դրամական նպաստ | X | X | X |
| Երեխայի խնամքի նպաստ և դայակի ծրագիր | X | | |
| Հաշմանդամության կենսաթոշակ և նպաստ | X | X | X |
| Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ և նպաստ | X | X | X |
| Հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդ | X | | |
| Աշխատանքային խեղում | - | | |
| Գործազրկություն | | | |

Ի դեպ. խնամքին առնչվող պատճառներով 2019թ. տնտեսապես ոչ ակտիվ է եղել տղամարդկանց 0.2%-ը, իսկ կանանց՝ 5.3%-ը:

# Մայրության պաշտպանություն

# Համապատասխանություն. արձակուրդի տևողությունը և եկամտի պաշտպանությունը

## Մայրության պաշտպանություն

- Աշխատանքային օրենսգիրք. 3 տարվա ծնողական արձակուրդ
- Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստի օրենք. 140 օր մայրության արձակուրդ




Համապատասխանություն. աշխատավարձի փոխարինման արժեքը տարբեր է քաղաքային և գյուղական վայրերում և ցածր C102 չափանիշով սահմանված նախկին եկամտի 2/3-ից:

# Զարգացման առաջարկություններ

- Նախածննդյան և հետծննդյան արձակուրդի բաշխման ճկունության թույլատրում:
- Ծնողական և մայրության արձակուրդի քաղաքականության համախմբում, ամբողջ ընթացքում եկամտի աջակցության ապահովում:
- Մայրության և նախատեսված հայրության արձակուրդի ժամանակահատվածների ներառում:
- Արձակուրդի տևողության համապատասխանեցում երեխաների մատչելի խնամքի հասանելիության հետ:
- Երեխայի խնամքի նպաստից և դայակի ծրագրից անցում ներդրումների երեխաների հանրային խնամքի ոլորտում:

# Տարեցների պաշտպանություն

# Իրավական ընդգրկում

Հայաստանում տարիքային կենսաթոշակային համակարգի նկարագրությունը




*Աղբյուր՝ Հեղինակ*

# Համապատասխանություն. հիմնասյուն 0 (բազային կենսաթոշակ, ՀՀ դրամ)

| | Կենսաթոշակի միջին մեծություն (ամսական) (2020թ.) | Միջին ամսական զուտ վաստակ (2019թ.) | C102 համապատասխան սոցիալական կենսաթոշակ 40%-ի չափով (ամսական) | C128 համապատասխան սոցիալական կենսաթոշակ 45%-ի չափով (ամսական) |
|---|---|---|---|---|
| **Բազային կենսաթոշակ** | 18,000 | 108,976 | 43,590 | 49,039 |

Եկամտի միջին մակարդակ ունեցող որոշ երկրներում հարկերով ֆինանսավորվող կենսաթոշակի համեմատումը, վերջին հասանելի տարվա համար
(% մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի նկատմամբ)




*Աղբյուր՝ HelpAge International կեսաթոշակի տվյալների շտեմարան և տարբեր ազգային աղբյուրներ*

# Համապատասխանություն. հիմնասյուն 2 (պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչ)

- Կուտակային կենսաթոշակի չափն ուղղակիորեն կախված է նախկինում կատարված հատկացումներից
  - Սա կարող է նշանակել էապես ցածր կենսաթոշակ նրանց համար, որոնց հատկացումները եղել են սահմանափակ ծավալով կամ ընդհատումներով. այս խնդիրը հատկապես վերաբերում է կանանց
- Համակարգը նախագծված է այնպես, որ կյանքի ընթացքում կատարված հատկացումները համապատասխանեն կյանքի ընթացքում ստացած կուտակային կենսաթոշակին
  - Հայաստանում կանայք աշխատանքի շուկայից ավելի շուտ են դուրս գալիս, ինչը նշանակում է հատկացումների կուտակման ավելի կարճ ժամանակաշրջան և կուտակված միջոցները կենսաթոշակի վրա բաշխելու ավելի երկար ժամանակաշրջան
- Որոշված հատկացումների (DC) մեխանիզմը չի կարող երաշխավորել, որ հատկացումներից ձևավորվող կենսաթոշակը բոլորի համար համարժեք կլինի

# Զարգացման առաջարկություններ

- Բարձրացնել ծերության նպաստների մակարդակը՝ ԱՄԿ-ի նվազագույն չափանիշներին ի համապատասխան
- Ինդեքսավորել նպաստները՝ երկարաժամկետ հատվածում դրանց արժեքը պաշտպանելու համար
- Իրականացնել 1-ին և 2-րդ հենասյուների ակտուարային գնահատում՝ յուրաքանչյուր համակարգում հատկապես ուշադրություն դարձնելով տղամարդկանց և կանանց համար կանխատեսվող պարտավորությունների և նպաստների մակարդակներին
- Քննարկել բարեփոխումների անհրաժեշտությունը

# Դեպի կենսացիկլի սոցիալական պաշտպանության ներառական համակարգ

# Եզրակացություններ

- Զարգացած, համապարփակ համակարգ՝ համեմատած բարձր միջին եկամուտ ունեցող այլ երկրների հետ
- Մայրության համակարգի վիճարկելի արդարություն և համապատասխանություն
- Կառավարման բարենպաստ շրջանակ, բայց քաղաքականության մշակման դիպվածային բնույթ և հատվածային իրավական շրջանակ
- Համակարգին ներհատուկ անհավասարություն՝ պայմանավորված կենսաթոշակային վճարումների և հարկային վճարների սերտ կապով
- Ակնհայտ բացեր, հատկապես՝ գործազրկության պաշտպանության բացակայություն
- Համապատասխանության խնդիրներ, որ ակներևում են միջազգային չափանիշների հետ համեմատությամբ
- Տարիքային կենսաթոշակային համակարգի կառուցվածքային բարեփոխումը մտահոգիչ է՝ ինչպես հասարակական, այնպես էլ գենդերային տեսանկյուններից:

# Հայաստանում սոցիալական պաշտպանության նվազագույն շեմի բացերը

- Երեխայի և ընտանեկան նպաստի անհամապատասխան համակարգ բոլորի համար
- Մայրության պաշտպանության խրթին և անհամապատասխան համակարգ
- Գործազրկության ապահովագրության մեխանիզմի բացակայություն
- Աշխատանքային խեղումներից պարտադիր ապահովագրության բացակայություն
- Անորոշություն պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ապագա համապատասխանության առնչությամբ՝ հատկապես կանանց համար

*Աղբյուր՝ Development Pathways*

# Խզվածքի վերացում

- Նկարագրված խզվածքները վերացնելու ամենապարզ ուղին կենսացիկլի երեք նպաստների կարևորումն է, որոնք կա՛մ բացակայում են, կա՛մ խիստ անբավարար են.

  1. Ամբողջական հիմնական ծառայությունների փաթեթ (ՀԾՓ) Հայաստանի բոլոր բնակիչների համար՝ կենսացիկլի ամբողջ ընթացքում առողջապահության համընդհանուր հասանելիություն ապահովելու համար
  2. Համընդհանուր մանկական նպաստ՝ 0-18 տարեկան բոլոր երեխաներին ընդգրկելու համար
  3. Գործազրկության ապահովագրության մշտական մեխանիզմ՝ գործազրկության նվազագույն խելամիտ ժամանակահատվածը փոխհատուցելու համար՝ համաձայն թիվ 102 կոնվենցիայի նվազագույն չափանիշների

# Հավելյալ միջոցառումներ՝ ավելի արդարացի համակարգ ձևավորելու համար

- Մայրության և ընտանիքի եկամուտների աջակցության համակարգի ամբողջական վերանայում
- Համակարգի, մասնավորապես տարիքային կենսաթոշակային համակարգի, ակտուարային լիակատար վերանայում
- Մոնիթորինգի և գնահատման գործընթացների ամրապնդում և ֆորմալացում